ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 3

«ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-26/94» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով «Հակոբ Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» ՊՈԱԿ-ի ձայնային համակարգի լրակազմի գնման գործընթացի գնահատող հանձնաժողովի նիստի

Հայտերի բացման նիստը տեղի ունեցավ 02.06.2026 թ. ժամը 10:00-ին էլեկտրոնային գնումների e-auction համակարգի միջոցով:

Գնահատող հանձնաժողով՝

Հանձնաժողովի նախագահ՝ Հրանտ Մկրտչյան
Հանձնաժողովի անդամ՝ Արման Երանոսյան
Ցոլակ Հակոբյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հերմինե Ալոյան

1. Տեղեկատվություն օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսակետից՝ հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի հիմնավորումների մասին.

1.1 Ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկայի բնութագրերի վերաբերյալ հիմնավորումներ չեն ներկայացվել:

2. Տեղեկատվություն հայտեր ներկայացրած մասնակիցների մասին.

2.1 Ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/Հ	Մասնակիցների անվանումները
1	«ՄԱՐՍ ՋԻ» ՍՊԸ
2	Բրիդջ ՍՊԸ
3	Տարոնիկ ՍՊԸ

3. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների հայտերի կազմման և ներկայացման՝ հրավերի պահանջներին համապատասխանության մասին.

3.1 **«ՄԱՐՍ ՋԻ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված հայտը կազմվել և ներկայացվել է հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

4. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը.

4.1 ԷԱՃ-ի ընթացակարգով կայացած հակադարձ աճուրդի արդյունքում մասնակիցները ներկայացրել են հետևյալ գնային առաջարկները.

Չափաբաժնի համար	Զբաղեցրած տեղ	Ներկայացված հայտեր	Նախահաշվային գին	Վերջին առաջարկ	
				Արժեք	Գին
1	1	«ՄԱՐՍ ՋԻ» ՍՊԸ	248928000	111111	133333.20
1	2	Բրիդջ ՍՊԸ	248928000	207439550	248927460
1	3	Տարոնիկ ՍՊԸ	248928000	248928000	248928000

5. Հակադարձ աճուրդի արդյունքում համակարգի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների ներկայացրած փաստաթղթերի առկայության և դրանց սահմանված պայմաններին համապատասխանության գնահատման մասին

5.1 **«ՄԱՐՍ ՋԻ» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում առկա չեն հրավերով պահանջվող փաստաթղթերը, իսկ ներկայացրած փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝

- Բացակայում է հայտի ապահովումը, ինչը շտկման ենթակա չէ,
- Բացակայում է Հավելված 1՝ դիմում-հայտարարությունը,
- Բացակայում է Հավելված 1.3՝ իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի հղումը:
- Բացակայում է առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը և տեխնիկական բնութագրին կից տեխնիկական առաջադրանքը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6. Տվյալներ մերժված մասնակիցների վերաբերյալ.

6.1 Հիմք ընդունելով ընդունելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և սույն արձանագրության 5.1 կետը, մերժել **«ՄԱՐՍ ՋԻ» ՍՊԸ**-ի հայտը՝ հրավերով սահմանված պահանջներին չհամապատասխանելու հիմքով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

6.2 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 18.05.2017թ թիվ 534-Ն որոշմամբ հաստատված կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետը մերժել Բրիդջ ՍՊԸ-ի և Տարոնիկ ՍՊԸ-ի ներկայացված հայտերը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7. Գնման գործընթացը չկայացած հայտարարելու մասին.

7.1 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը՝ գնման գործընթացը հայտարարել չկայացած՝ պայմանագիր չկնքվելու հիմնավորմամբ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

7.2 Հրապարակել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն անգործության ժամկետ սահմանել ընթացակարգի չկայացման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0

Գնահատող հանձնաժողով՝

---------- Հրանտ Մկրտչյան /նախագահ/

---------- Արման Երանոսյան

---------- Ցոլակ Հակոբյան

---------- Հերմինե Ալոյան /քարտուղար/